


### 3. 2014 թՎԱԿԱՆԻ ԶՈՐՈՌԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՓԱՍՏԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

#### 3.1. Գնաճ

##### 3.1.1. Փաստացի գնաճ և գնաճի նպատակի իրագործում

**12-ամյա գնաճը գերազանցել է սպասելիքները՝ դեկտեմբերի վերջին կազմել 4.6%, գտնվելով գնաճի տատանումների թույլատրելի միջակայքում:**

2014 թ. չորրորդ եռամսյակում շարունակվել է գնաճային միջավայրի ընդլայնումը, որը հատկապես գերազանցել է սպասելիքները դեկտեմբերին՝ պայմանավորված տարածաշրջանի աշխարհաքաղաքական և տնտեսական գարգացումներով:



2014 թ. չորրորդ եռամսյակում դրամավարկային քաղաքականության ծրագրով նախատեսվում էր տարեվերջին գնաճային միջավայրի ընդլայնում, թեև տարին ամփոփվելու էր 12-ամյա գնաճի նպատակային ցուցանիշից ցածր մակարդակում:

Պայմանավորված տարեվերջին արտադրութային հոսքերի կտրուկ նվազման և ռուսական ռուբլու արժեցությամբ դրամի արժեզրկման ու գնաճային միջավայրի ընդլայնման դրսուրումներով, ինչպես նաև դրանց արդյունքում ձևավորված գնաճային սպասումներով՝ **12-ամյա գնաճը գերազանցել է սպասելիքները՝ դեկտեմբերի վերջին կազմելով 4.6%: Նշենք, որ այն գտնվել է գնաճի տատանումների թույլատրելի 4.0 ± 1.5 տոկոսային կետ միջակայքում:** Դաշտետու եռամսյակում արձանագրվել է 5.4% գնաճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.3%-ի փոխարեն, ինչը պայմանավորվել է գերազանցապես պարենային ապրանքների գների 9.1% աճով՝ ընդհանուր գնաճն 4.8 տոկոսային կետով նպաստմամբ: Տարեվերջի բարձր գնաճը ներմուծված ապրանքների գների աճի հետևանք է՝ հիմնականում պայմանավորված դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Բարձրացել են հացամթերքի, կենդանական և բուսական յուղերի, շաքարավագի գները: Նշենք նաև, որ տարեվերջին մի շարք պարենային ապրանքատեսակների՝ կաթնամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի գների աճը պայմանավորվել է նոյեմբերից դրանց դրոշմապիտակների ներմուծմամբ: Պարենային ապրանքների կառուցվածքում միզգ և բանջարեղենի, ինչպես նաև ձվի գների բարձրացումը հիմնականում կրել է սեզոնային բնույթը:

Գնաճն ըստ հիմնական նպաստում ունեցող ապրանքախմբերի	2014 թ. սեպտեմբեր (տ/տ)		2014 թ. դեկտեմբեր (տ/տ)		2014 թ. չորրորդ եռամսյակ	
	ԱԶ	ՆԱՀԱՄԱ	ԱԶ	ՆԱՀԱՄԱ	ԱԶ	ՆԱՀԱՄԱ
<b>Ապրանքախմբի անվանումը</b>						
<b>ՍԳԻ</b>	<b>1.5</b>		<b>4.6</b>		<b>5.4</b>	
<b>Պարենային ապրանքներ</b>	<b>1.4</b>	<b>0.8</b>	<b>6.3</b>	<b>3.4</b>	<b>9.1</b>	<b>4.8</b>
հացամթերք	0.8	0.1	5.9	0.6	5.0	0.5
կաթնամթերք	5.1	0.2	13.1	0.6	8.7	0.4
մսամթերք	0.6	0.1	3.3	0.3	2.8	0.3
միզգ	5.3	0.2	14.6	0.5	8.2	0.3
բանջարեղեն և կարտոֆիլ	1.7	0.1	7.9	0.5	67.3	4.2
կենդանական և բուսական յուղեր	-3.3	-0.1	1.9	0.1	3.1	0.1
ձու	-10.8	-0.1	2.1	0.0	12.6	0.2
շաքարավագ	-6.8	-0.1	6.9	0.1	9.6	0.1
Ոչ պարենային ապրանքներ	<b>0.9</b>	<b>0.1</b>	<b>1.6</b>	<b>0.3</b>	<b>2.4</b>	<b>0.4</b>
<b>Ծառայություններ</b>	<b>1.8</b>	<b>0.6</b>	<b>3.0</b>	<b>0.9</b>	<b>0.5</b>	<b>0.2</b>

Չորրորդ եռամսյակում գրանցվել է **շուրջ 2.0%** բնականոն գնաճ, 12-ամյա ցուցանիշը դեկտեմբերի վերջին կազմել է **2.8%:**

Նախորդող մեկ տարվա հորիզոնում, որն ընդգրկում է **2014 թվականը**, կը փաստարկեն ու սպասումները գնաճի սպասվող


Վարքագիր և դրան համապատասխան իրականացվելիք դրամավարկային քաղաքականության վերաբերյալ հետևյալն էին. **ԿՐ ՀԱՅ-ԽԱՍՏԵՎՈՄՄԵՐԻ ՀԱՄԱԺԱՄ՝ 2014 թ. գնածը շարունակելու Էր Նվազել,** և գնահատվում էր, որ երրորդ եռամյակում այն կիջներ տատանումների թուլատրելի միջակայքի ստորին սահմանին մոտ՝ պայմանավորված 2013 թվականի հուլիսին էներգակիրների սակագների աճի ազդեցության չեղոքացնամբ: Տարեվերջին 12-ամյա գնածը կկայունանար նպատակային ցուցանիշի միջակայքում՝ պայմանավորված հիմնականում դրամավարկային պայմանների թուլացման լագային ազդեցությամբ և ընդլայնողական հարկաբյուջեային քաղաքականության արդյունքում, իսկ կանխատեսվող հորիզոնում կտատանվեր նպատակային ցուցանիշի շուրջը: Այդ հրավիճակում **2014 թ. առաջին եռամյակում ԿՐ-ն շարունակելու Էր թուլացնել դրամավարկային պայմանները՝ արձագանքելով կանխատեսվող ցածր տնտեսական ակտիվությանն ու գնածային միջավայրի մեղմանը,** իսկ քաղաքականության հետագա ուղղությունները կապահանավորվեին նաև հարկաբյուջեային քաղաքականության հրականացման ընթացքով:

Դրամավարկային պայմանների թուլացման համատեքստում ԿԲ-ն նախատեսում էր տարեսկզբից նվազեցնել **դրամով պարտադիր պահուստավորման նորման 4-ից 2%-ի:**

Փաստացի զարգացումների համաձայն 2014 թ. առաջին երեք եռամսյակներում 12-ամյա գնածը նվազել է կանխատեսվածից արագ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված արտաքին և ներքին պահանջարկի նվազման ուղղությամբ ճշգրտումներով։ Ելնելով նշվածից՝ յուրաքանչյուր հաջորդ եռամսյակի կանխատեսումներում ԿԲ-ն ճշգրտել է գնածի կանխատեսված վարքագիծը նեպի ներքև։

**2014 թ. անցած երեք եռամսյակներում գրանցվել է 0.8% զման-կում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3.2% զմանի փոխարեն, ինչի պարագայում 12-ամսյա գնաճը աստիճանաբար նվազել է և 2014 թ. սեպտեմբերի վերջին կազմել 1.5%՝ գտնվելով զնաճի նպատակային ցուցանիշի տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից ներքև։ Ընդ որում, նույն ժամանակահատվածում **12-ամսյա զմանի՝ սպասվածից ավելի նվազմանը** նպաստել են առավելապես ներդրումների ցածր մակարդակի և մասնավոր սպառման աճի տեմպերի դանդաղման պարագայում **տնտեսական աճի ցածր տեմպերի պահպանումը և պարենային որոշ ապրանքների զմերի զգալի նվազումը**։ Նույն ժամանակահատվածում շարունակաբար նվազել է նաև **12-ամսյա բնակչության զմանը** նախորդ տարեվերջի 3.7%-ի փոխարեն 2014 թ. սեպտեմբերի վերջին կազմելով **1.0%**։**

Նշված ժամանակահատվածում, հաշվի առնելով 2014 թ. հուլիսից ներքին գների վրա նախորդ տարում էներգակիրների սակագների բարձրացման զնանային ազդեցության վերացումը և միջնաժամկետ հատվածում արտաքին ու ՀՀ տնտեսություններից ոչ գնաճային ազդեցությունների սպասումները, ՀՀ ԿԲ-ն շարունակել է աստիճանաբար թուլացնել դրամավարկային պայմանները: **2014 թ. անցած ինն ամիսներին** ԿԲ-ն իշեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույթն ընդիհանուր առնամբ 1.0 տոկոսային կետով՝ սեպտեմբերի վերջին սահմանելով **6.75%**: Դրան զուգընթաց, դրամավարկային պայմանների թուլացում է արձանագրվել **2014 թ. փետրվարից դրամով պարտադիր պահուստավորման նորմայի՝ 4-ից 2% իշեցման արդյունքում**: Վերոնշյալ գործողություններն իրենց ազդեցությունն են թողել ֆինանսական շուկայի կարճաժամկետ տոկոսադրույթների նվազման վրա. դրամբ ազդեցություն կունենան նաև 2014 թ. չորրորդ



\* 2014 թ. առաջին հիմնամիսներին ծևակորված ցածր գնաճային միջազգայիր չորրորդ եռամսյակում զգալիորեն ընդլայնվել է, ինչի հիմնան վրա ԿԲ-ն ծցքութել է չորրորդ եռամսյակի գնաճի կամբաւտեսումը ամի ուղղությամբ: Ըստ այդ սեպանարի՝ 12-ամսյա գնաճը մննելու էր տասակումների թույլատրելի միջազգայիր պրեեն տարեկանուն, և սկսնելու էր տասակումների նպատակային 4% ցուցամիջի շուրջը:

Եռամսյակում և 2015 թ. առաջին կիսամյակում տնտեսական ակտիվության աճի ու գնաճի ընդլայնման վրա:

**Գնաճային զարգացումները կտրուկ տարբերվեցին և գերազանցին ակնկալիքները 2014 թ. չորրորդ եռամսյակում, երբ աշխարհում, մասնավորապես՝ տարածաշրջանում խորացած աշխարհաքաղաքական հիմնախնդիրները։ Մյուս կողմից, ի տարբերություն այլ զարգացած և զարգացող երկրների, դիտվում էր **ԱԱՆ տնտեսական աճի տեսակերի արագացում** և **ԱԱՆ դոլարի ամրապնդում**, ինչն ուղեկցվում էր մնացած երկրների արժույթների արժեզրկմանը և գնաճային բարձր միջավայրի ձևավորմանը։ Նշված երևությունների ազդեցությունը նկատելի էր առաջին հերթին արժութային շուկայում, որտեղ, արտերկրից և ՀՀ հիմնական գործընկեր Ռուսաստանից արտարժութային փոխանցումների զգալի կրճատման պարագայում, արձանագրվեց դրամի կտրուկ արժեզրկում։ Վերջինս անմիջապես անդրադապավ ապրանքային շուկայի վրա՝ ընդլայնելով գնաճային միջավայրը և ձևավորելով գնաճային սպասումներ։ Այս ամենի հետևանքով **12-ամյա գնաճը տարեվերջին սպասվող 3.2%-ի փոխարեն կազմեց 4.6%՝ գտնվելով նպատակային ցուցանիշին մոտ**։**

**Տարեվերջին արտարժութային և ապրանքային շուկաներում ստեղծված լարվածությունը ձևավորելի էր գնաճային ներում և սպասումներ, որին կը սահմանագրել է լոնքարդային ժամանակաշրջանը՝ տոկոսադրույթի և արտարժույթով ներգումած միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմանը՝ բարձրացնալու մասին պարագայությունը։**

ԿԲ-ն ստեղծված իրավիճակին արձագանքեց կտրուկ գործողություններով։ մասնավորապես՝ նոյեմբերի վերջից բարձրացվեց **լոնքարդային ռեպոյի տոկոսադրույթը 8.25-ից 21.0%-ի**, այնուհետև դեկտեմբերի կեսից բարձրացվեց **արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորման 12.0-ից 24.0%-ի**։ ԿԲ կողմից ֆինանսական շուկայի պայմանների խստացմանը շուկայական կարճաժամկետ դրամային տոկոսադրույթներն արձագանքեցին կտրուկ աճով՝ ձևավորվելով ԿԲ լոնքարդային ռեպո գործիքի տոկոսադրույթի շուրջ, ինչի արդյունքում ֆինանսական շուկայի ուղղորդիչ տոկոսադրույթի դերը ստանձնեց լոնքարդային ռեպո գործիքի տոկոսադրույթը։ Նշված քայլերի արդյունքում դեկտեմբերի վերջին արժութային և ապրանքային շուկաներում դիտվեցին որոշակի կայունացման միտումներ, որին ԿԲ համապատասխան արձագանքը եղավ **ինչպես արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման նորմատիվի սահմանաշաբիի, այնպես էլ լոնքարդային ռեպո գործիքի տոկոսադրույթի համապատասխանարար 24.0-ից 20.0%-ի և 21.0-ից 20.0%-ի իջեցումը**։ Լոնքարդային ռեպոյի տոկոսադրույթը ԿԲ-ն շարունակել է իջեցնել նաև 2015 թ. սկզբին հասցնելով **14.5%-ի**, ինչն անմիջականորեն ուղղորդել է շուկայական կարճաժամկետ դրամային տոկոսադրույթները նվազման ուղղությամբ։

Միևնույն ժամանակ, հետագա գնաճային ճնշումները մեղմելու և գնաճային սպասումները նպատակային ցուցանիշի շուրջ խարսխելու նկատառումնով, ԿԲ-ն դեկտեմբերի վերջին 1.75 տոկոսային կետով բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույթը։ Այս գործընթացը շարունակել է նաև 2015 թ. սկզբին՝ վերաֆինանսավորման տոկոսադրույթը բարձրացնելով 10.5%-ի, որն արտացոլում էր զարգացող երկրներում ներդրումների սիսկերի և տոկոսադրույթների աճի միտումները ավելի երկարաժամկետ հատվածում։


Տնտեսության բնականոն իրավիճակին վերադառնալուն զուգընթաց, շուկայական կարճաժամկետ տոկոսադրույթները ասդամարար կնևազեն ձևավորվելով վերաֆինանսավորման տոկոսադրույթի շուրջ, ինչով էլ վերջինս կրկին կստանձնի շուկայում իր ուղղորդիչ դերը։

**ԿԲ կողմից ծեռարկված կտրուկ գործողությունների աղեցութային և տնտեսության բնականոն իրավիճակին վերադառնալուն զուգընթաց, շուկայական կարճաժամկետ տոկոսադրույթները ասդամարար կնևազեն ձևավորվելով վերաֆինանսավորման տոկոսադրույթի շուրջ, ինչով էլ վերջինս կրկին կստանձնի շուկայում իր ուղղորդիչ դերը։**


### 3.1.2. Ներմուծման գներ և արտադրողների գներ

**Ներմուծման գներ**. 2014 թ. չորրորդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային գների նվազման տեմպերը բավականաչափ արագացել են և կազմել են/են 6.2%, որի պա-

2014 թ. չորրորդ եռամյակում ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային գների նվազումը բավականաչափ արագացել է (տ/տ)



2014 թ. հունվար-դեկտեմբերին գների առավել քարձը աճ է գրանցվել և արդյունաբերության և բեռնափոխադրումների գծով



բագայում տ/տ նվազումը կազմել է 8.9%: Ընդհանուր առմամբ, ներմուծման դոլարային գների նվազումը հիմնականում պայմանավորվել է գործնկեր երկրներում չորրորդ եռամյակում արձանագրված արժութային փոխարժեքների՝ ԱՄ դոլարի նկատմամբ կտրուկ արժեզրկմամբ: Ներմուծման դոլարային գների տ/տ նվազմանը նպաստել է ապրանքների գների նվազում՝ 7.0 տոկոսային կետով, և ծառայությունների գների նվազում՝ 1.9 տոկոսային կետով (չորրորդ եռամյակում ծառայությունների ներմուծման դոլարային գները նվազել են եռ/եռ 6.0%-ով, իսկ ապրանքների դոլարային գները նվազել են եռ/եռ 6.3%-ով): Ապրանքների ներմուծման դոլարային գների նվազմանը հիմնականում նպաստել է միջանկյալ սպառնան ապրանքների գնանկումը: Այս խնդրում ներառված բոլոր ապրանքների գծով եռամյակում արձանագրվել է գների նվազում:

Սպառողական ապրանքների դոլարային գների նվազմանը հիմնականում նպաստել է Ռուսաստանի, Եվրոպիայի և Ուկրաինայի դոլարային գների տ/տ նվազում՝ պայմանավորված այդ երկրներում փոխարժեքների արժեզրկմամբ: Արդյունքում՝ սպառողական ապրանքներն ունեցել են 1.8 տոկոսային կետ բացասական նպաստում:

Այնուամենայնիվ, արտաքին հատվածում հիմնական հումքային և պարենային շուկաներում առկա գնանկումային միտունների հնարավոր արտացոլում ՀՀ հանապատասխան շուկաների գնային փոփոխություններում դեռևս չի դիտվել:

**Արտադրողների գմեր<sup>12</sup>**. 2014 թվականի չորրորդ եռամյակում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների ինդեքսների աճ, ինչի արդյունքում հունվար-դեկտեմբերին ՀՆԱ դեֆլյատորը, ըստ ՀՀ կԲ գնահատումների, կազմել է տ/տ շուրջ 103.5:

**Արդյունաբերության ճյուղում** չորրորդ եռամյակում արձանագրվել է գների տ/տ 6% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի աճը կազմել է տ/տ 8.5%՝ պայմանավորված հանքագործության՝ 6.6%, մշակող արդյունաբերության՝ 2.9% և էներգիայի, զազի արտադրության և բաշխման 30.4% աճով: Ընդ որում, վերջինս արդյունքը՝ 2014 թվականի օգոստոսի 1-ից էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման:

**Գյուղատնտեսության ճյուղում** չորրորդ եռամյակում արձանագրվել է գների տ/տ 4% աճ, իսկ հունվար-դեկտեմբերի գնաճը կազմել է 0.8%՝ պայմանավորված անասնաբուծության ճյուղում գների 3.6% աճով: Բուսաբուծությունում արձանագրվել է գների 4.1% նվազում: Գնանկումը պայմանավորվել է կարտոֆիլի և բանջարաբուստանային կոլտուրաների գների՝ 4.3%, բուստանային՝ 44.4% և հացահատիկային մշակաբույսերի՝ 11.8% նվազմամբ: Անասնաբուծության ոլորտի գնաճը հիմնականում արդյունք է կաթ, կաթնաբերքի՝ 10.4% և ձվի՝ 7.7% գների աճի:

**Հիմարարությունում** չորրորդ եռամյակում արձանագրվել է գների տ/տ 2.6% աճ, որի պարագայում հունվար-դեկտեմբերի գնաճը կազմել է տ/տ 2.1%՝ հիմնականում պայմանավորված ճյուղում աշխատավարձի 13% աճով:

**Քերնավորխաղորումների** գների աճը չորրորդ եռամյակում կազմել է տ/տ 1.6%, որի պարագայում հունվար-դեկտեմբերին արձանագրված գների աճը կազմել է տ/տ 8%՝ պայմանավորված երկարութային (14.5%), խողովակաշարային (16.9%) և օդային (0.1%) տրանսպորտի սակագների աճով: Ընդ որում, խողովակաշարային տրանսպորտի սակագների բարձր աճը հիմնականում էներգակիրների սակագների բարձրացման հետևանք է:

<sup>12</sup> Սույն հատվածում ներկայացված գների ինդեքսների փոփոխությունը՝ 2014 թվականի հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ է, եթե այլ բան նշված չէ:

<sup>13</sup> Ներկայացված են գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գները:

### 3.1.3. Գնաճի և տոկոսադրույթի սպասումներ

2014 թ. չորրորդ եռամյակում ԿԲ կողմից մակրոտնտեսական մի շաբթ ցուցանիշների սպասումների վերաբերյալ ֆինանսական հատվածի կազմակերպությունների և տնային տնտեսությունների շրջանում իրականացված հարցման արդյունքներով ֆինանսական համակարգում գնաճային սպասումները առաջիկա մեկ տարվա հորիզոնուն աճել են՝ արտահայտելով եռամյակում դիտված դրսնորումները: Բանկերի գնաճային սպասումները մեկ տարվա հորիզոնում ձևավորվել են 12-ամյա գնաճի՝ միջին հաշվով մոտ 5.8% մակարդակի շուրջ՝ նախորդ հարցման 5.0% միջին ցուցանիշի փոխարեն, իսկ Վարկային կազմակերպությունների գնաճային սպասումները միջին հաշվով կազմել են 5.4%՝ նախորդ հարցման շուրջ 4.5%-ի փոխարեն:

Ըստ հարցման արդյունքների՝ մեկ տարվա կտրվածքով ֆինանսական համակարգում սպասվում է շուկայական տոկոսադրույթների որոշակի աճ, որը թե՛ ներգրավվող ավանդների, թե՛ տրամադրվելիք վարկերի տոկոսադրույթների գծով հիմնականում կարձանագրվի 2015 թ. առաջին եռամյակում, իսկ այնուհետև տոկոսադրույթները կցուցաբերեն կայուն վարքագիծ:

## 3.2. Նամախառն առաջարկ և համախառն պահանջարկ

### 3.2.1. Նամախառն առաջարկ<sup>14</sup>

2014 թվականի հունվար-սեպտեմբերին արձանագրված **տնտեսական աճը** կազմել է տ/տ 3.9%, որը փոքր-ինչ (0.2 տոկոսային կետով) բարձր է ՀՀ ԿԲ նախորդ կանխատեսումից:

2014 թվականի չորրորդ եռամյակում տնտեսական ակտիվությունը դանդաղել է՝ ի հաշիվ առևտորի ծավալների կրճատման: Արդյունքում, հունվար-դեկտեմբերի տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը կազմել է 3.9%՝ հունվար-սեպտեմբերի տ/տ 4.3%-ի փոխարեն:

Այսպիսով, քանի որ մակրոտնտեսական զարգացումները հիմնականում պահպանվել են ՀՀ ԿԲ կանխատեսումների շրջանակում, 2014 թվականի տնտեսական աճի կանխատեսումները մնացել են անփոփոխ: ակնկալվում է **3.2-3.5%** աճ<sup>15</sup>:

**Արդյունաբերության** ճյուղում 2014 թվականին ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 0.7-1.2%՝ հիմնականում պայմանավորված սննդամթերքի<sup>16</sup> (8.4%), նետալուրգիայի (10.3%), ծխախոտի (36.5%) և ջրամատակարարման (5%) արտադրության ծավալների աճով: Ընդ որում, չորրորդ եռամյակում, նախորդ եռամյակի համեմատությամբ, աճի տեմպերի արագացումը հիմնականում արդյունք է արտահանման նոր շուկաների բացահայտման և արտահանվող ապրանքների բազմազանեցման: Մասնավորապես՝ Ռուսաստան (ԵՄ-ից հետո մեծությամբ երկրորդ առևտորային գործընկեր) արտահանման ծավալների նվազումը չեղոքացվել է այլ երկրներ արտահանման ծավալների բարձր աճով<sup>17</sup>:


<sup>14</sup> 2014 թվականի տ/տ հունվար-դեկտեմբերի ժամանակահատվածում տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների իրական աճի ցուցանիշները ներկայացնում են ՀՀ ԿԲ կանխատեսումները, իսկ ներաջուղյական ցուցանիշները՝ 2014 թվականի տ/տ հունվար-դեկտեմբերի թողարկման աճի տեմպերը. Եթե այլ բան նշված չէ:

<sup>15</sup> Տես ՀՆԱ իրական աճի (կուտակային) կանխատեսման հավամակամությումների բաշխման գծանկարի 30% հավամակամության միջակայքը:

<sup>16</sup> Սննդամթերքի արտադրության աճն արձանագրվել է հիմնականում մայ (13.7%), մսամթերք (15.7%), կարի (6.6%), մածովի (33%), թթվասերի (14.7%), պամրի (5.4%), կենդանական յուղի (2.1 անգամ), մակարոններների (9.1%), շաքարավագի (28.1%), ալյուրի (29.6%), ծավարենների (29.7%), հրուշակենների (9.4%), պահածոների (17.3%) և պաղպաղակի (48.8%) արտադրության բնամթերային ծավալների աճի հաշվին:

<sup>17</sup> Տես սույն հաշվետվության «3.4. Վճարային հաշվեկշիռ» բաժինը:

Փաստացի իրական ՀՆԱ-ի և տնտեսության  
ճյուղերի տ/տ կուտակային աճի տեժապը (%)



Հիմնվելով շինարարության 2014 թվականի փաստացի գարգացումների վրա՝ ճյուղի ավելացված արժեքի անկումը գնահատվում է 3.5-4.5%: Ընդ որում, բացառությամբ բնակչության (18.9% նվազում), պետական բյուջեի (13.5% նվազում) և մարդասիրական օգնության (23.6% նվազում) միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների՝ աճ արձանագրվել է շինարարության ֆինանսավորման մյուս բոլոր աղբյուրներում: Մասնավորապես աճել են կազմակերպությունների (3.7%), միջազգային վարկերի (7.5%) և համայնքների (61.9%) միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները:

**Ծառայությունների** ոլորտում 2014 թվականի ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 4.2-4.7%, ինչը նատուցված ծառայությունների և առևտությունների համապատասխանաբար 7.8% և 1.6% աճի արդյունք է: Ընդ որում, մատուցված ծառայությունների ծավալի աճին մեծապես նպաստել է օրային տրամսպորտի (66.5%), բանկային գործունեության (9%), մշակույթի, զվարճության և հանգստի (56%), անշարժ գույքի հետ կապված գործունեության (9.5%), գրուաշղօջային գործունեության (9.1%), հանրային սննդի (9.3%) և տեղեկատվական տեխնոլոգիաների (7.5%) ոլորտներում արձանագրված աճը: Առևտությունների աճը պայմանավորվել է մեծածախ և ավտոմեքենաների առևտությունների շրջանառության ծավալների համապատասխանաբար 5% և 3.9% աճով, որոնք չեզոքացրել են մանրածախ առևտություններում արձանագրված 0.4% անկումը: Ընդ որում, վերջինս չորրորդ եռամյակում տրամսֆերտների գույտ ներհոսքի կտրուկ նվազմամբ պայմանավորված բնակչության իրական տնօրինվող եկամուտների կրճատման հետևանք է:

**Գյուղատնտեսության** ճյուղում 2014 թվականի ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 7.3-7.8%, ինչն արդյունք է անասնապահության, բուսաբուծության և ձկնորսության թողարկման ծավալների համապատասխանաբար 6.9%, 7.8% և 24.6% աճի: Ընդ որում, անասնապահության ենթաճյուղում արձանագրված աճը պայմանավորված է կաթի (6.6%), ձվի (3.8%), սպանդի համար իրացված անասունի և թռչնի արտադրության ծավալների (11.3%) աճով, իսկ բուսաբուծության աճը՝ կարտոֆիլի (11%), հացահատիկի (7.6%), բանջարեղենի (9%), բուստանային մշակաբույսերի (18.1%) և խաղողի (8.5%) արտադրված ծավալների աճով:

### 3.2.2. Քամախառն պահանջարկ<sup>18</sup>

2014 թ. մասնավոր սպառման աճը դանդաղել է և գնահատվում է, որ մասնավոր սպառման ուղղված ժախսերը եւկանորեն չեն տարրերի մախորդ տարվա ցուցամիջից:

2014 թվականի չորրորդ եռամյակում մասնավոր սպառման ուղղված ծախսերի աճը դանդաղել է և կազմել 0.9%, որը նախորդ կանխատեսումների համեմատ ավելի ցածր է: Այս պայմաններում 2014 թվականին, 2013 թվականի համեմատ, մասնավոր սպառման ուղղված ծախսերն եւկանորեն չեն փոխվի:

2014 թ. տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման ուղղված ծախսումների վրա բացասարար է անդրադարձել ՈԴ-ից դրամական փոխանցումների նվազումը: Այդ ազդեցությունը որոշակիորեն մեղմվել է տարվա ընթացքում իրականացված ընդլայնողական դրամավարկային և հարկաբուծային քաղաքականու-

<sup>18</sup> Մասնավոր ծախսումների, մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների 2014 թվականի չորրորդ եռամյակի ցուցամիջները ՀՀ ԿԲ գնահատումներում են՝ հիմնված 2014 թվականի երրորդ եռամյակի փաստացի տվյալների վրա: Ենթարաժնում ներկայացված աճի գնահատումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մկանումներ են, եթե այլ բան նշված չէ:

թյունների դրական ազդեցությամբ: Մասնավորապես՝ ընդլայնողական դրամավարկային քաղաքականության պայմաններում տարվա ընթացքում տնտեսությանը տրամադրված ընդհանուր վարկերն աճել են շուրջ 20%-ով, սպառողական վարկերը՝ 23.5%-ով, իսկ հարկաբյուջետային ընդլայնող ազդակը կազմել է շուրջ 0.7%:

2014 թվականի չորրորդ եռամյակում ՌԴ-ից դրամական փոխանցումների կրծատման խորացումը գգալիորեն նվազեցրել է տնային տնտեսությունների տնօրինվող եկամուտները, ինչն էլ, երրորդ եռամյակում արձանագրված թույլ աճի համեմատ, հաճացեցրել է չորրորդ եռամյակում մասնավոր սպառմանն ուղղված ծախսերի աճի տեմպի դանդաղման:

Մասնավոր սպառման վերը նկարագրված զարգացումների մասին են վկայում ՀՀ ԿԲ կողմից իրականացված հարցումների արդյունքները<sup>19</sup>, ինչպես նաև ԱՎԾ կողմից հաշվարկվող առևտությունների ապահովածի համեմատ, նվազել է շուրջ 2.0%-ով, իսկ նախորդ եռամյակի համեմատ՝ շուրջ 7.0%-ով: Ընդ որում, նվազման միտում են ցուցաբերել սպառողների վստահության ինդեքսը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է շուրջ 0.7%-ով, իսկ նախորդ եռամյակի համեմատ՝ շուրջ 7.0%-ով: Ընդ որում, նվազման միտում են ցուցաբերել սպառողների վստահության ինդեքսի բոլոր բաղադրատրերը՝ նախանշելով տնային տնտեսությունների կողմից սպառողական ծախսերի կրծատումը հաշվետու ժամանակահատվածում: Չորրորդ եռամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տնտեսություննում առևտությունը շրջանառությունը կրծատվել է 5.6%-ով. Ընդ որում՝ մանրածախ առևտությունը ներմուծումը կրծատվել է 7.2%-ով, իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումը դոլարային արտահայտությամբ նվազել է 9.3%-ով:

**Մասնավոր ներդրումների 2014 թվականի աճը գմանատվում է 1.2%:**

**Մասնավոր սպառման և ներդրումների տ/տ աճ**



■ Մասնավոր սպառման տ/տ աճ   ■ Մասնավոր ներդրումների տ/տ աճ


2014 թվականի չորրորդ եռամյակում տնտեսությունում **ներդրումային ակտիվությունը** սպասվածից փոքր-ինչ թույլ է եղել, որի պայմաններում մասնավոր ներդրումների նվազումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գնահատվում է 0.6%: Տարեսկզբից նկատված թույլ ներդրումային ակտիվությունը պայմանավորված է շինարարության ոլորտում բողարկման ծավալների կրծատմամբ և ընդհանուր գործարար ակտիվության թույլ նակարգուվ: Չորրորդ եռամյակում ՌԴ-ից դրամական փոխանցումների նվազումը հաճացեցրել է բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության կրծատման, ինչով պայմանավորվում է նույն ժամանակահատվածում մասնավոր ներդրումների 0.6%-ով կրծատումը՝ նախորդ եռամյակի 3.0% աճի փոխարեն: Այս պայմաններում մասնավոր ներդրումների 2014 թվականի աճը գնահատվում է 1.2%:

2014 թվականին, շինարարության թողարկման ծավալների 4.3%-ով նվազման պայմաններում, մասնավոր ներդրումների չափավոր աճը գրանցվել է ի հաշիվ տնտեսությունում գործող ձեռնարկություններում իրականացված ներդրումների աճի: Ըստ ՀՀ ԿԲ կողմից ձեռնարկությունների շրջանում ներդրումների վերաբերյալ իրականացված հարցման արդյունքների<sup>20</sup> 2014 թվականին ներդրումներ իրականացրած ձեռնարկությունների մոտ 50%-ը որպես ներդրումների ֆինանսավորման աղյուր է օգտագործել տեղական բանկերից ստացած վարկային միջոցները: 2014 թվականին տնտեսության տարբեր ոլորտներում գործող ձեռնարկություններին տրամադրված վարկավորման շուրջ 17% աճին նպաստել է ԿԲ կողմից իրականացված ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը:


<sup>19</sup> <https://www.cba.am/am/SitePages/statsscci.aspx>:

<sup>20</sup> <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>:

**Զուտ արտահանման բացասական մնացորդը փոքր-ինչ նվազել է 2014 թ. չորրորդ եռամյակում**  
(զուտ իրական արտահանում, տ/տ %, դրական նշանը՝ բարելավում)



### Անվանական աշխատավարձի տ/տ աճ



Մասնավոր սպառման և ներդրումների վերը նկարագրված զարգացումների արդյունքում մասնավոր ծախսումների աճի տեմպը չորրորդ եռամյակում, երրորդի համեմատ, դանդաղել է և կազմել 0.7%, ինչն էլ պետական ծախսերի 2.3% աճի հետ հանգեցրել է հաշվետու ժամանակահատվածում ներքին պահանջարկի 1.0% աճի:

Այս զարգացումների պարագայում մասնավոր ծախսումների ճնշվածքը չորրորդ եռամյակում գնահատվում է բացասական, ինչը գնաճի վրա ունեցել է **1.5-1.7 սոլիսային կետ զայռող ազդեցություն:**

ՀՀ ԿԲ գնահատումների համաձայն 2014 թ. չորրորդ եռամյակում զուտ իրական արտահանման բացասական հաշվեկշիռը որոշակի նվազել է՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական աճի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման իրական առաջանցիկ աճով: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական աճի տեմպերը կազմել են տ/տ 7.3%՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների<sup>21</sup> տ/տ 3.5% աճի պարագայում:

Բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի դոլարային արժեքը 2014 թ. չորրորդ եռամյակում բավականաչափ նվազել է՝ պայմանավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ուստական ռուբլու կտրուկ արժեզրկմամբ: Արդյունքում՝ ֆիզիկական անձանց ոչ առևտրային փոխանցումների զուտ ներհոսքը չորրորդ եռամյակում նվազել է տ/տ 30.5%-ով (տարեկան կտրվածքում՝ 10.1% նվազում):

### 3.2.3. Աշխատանքի շուկա<sup>22</sup>

2014 թվականի չորրորդ եռամյակում **միջին անվանական աշխատավարձի աճի տեմպը** համապատասխանել է նախորդ կանխատեսումներին և կազմել 9.5%, որի պարագայում հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում անվանական աշխատավարձի աճը կազմել է 8.1%: Նշանակած ժամանակահատվածում պետական աշխատավարձների աճի տեմպը փոքր-ինչ առաջանցիկ էր մասնավորի նկատմամբ:

2014 թվականի հուլիսից պետական հատվածի մի շարք ոլորտներում զբաղվածների աշխատավարձի բարձրացման արդյունքում տարվա երկրորդ կիսամյակում պետական հատվածի միջին աշխատավարձի աճը կազմել է 11.3%՝ առաջին կիսամյակում արձանագրված աճի համեմատ ավելանալով 6 տոկոսային կետով. արդյունքում, ոլորտի միջին աշխատավարձի տարեկան աճը կազմել է 8.3%:

Առաջին կիսամյակում մասնավոր հատվածում միջին անվանական աշխատավարձի աճի տեմպը կազմել է 8.8%, ինչը հիմնականում պայմանավորված էր կուտակային կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված՝ մասնավոր հատվածի որոշ ձեռնարկություններում գործատումների կողմից աշխատավարձների բարձրացմամբ: Յուլիսից բարձրացել է նաև նվազագույն աշխատավարձի շենքը:

Չնայած վերը նշված գործողների՝ երկրորդ կիսամյակում պահպանվող համեմատաբար թույլ տնտեսական ակտիվությունը մասնավոր հատվածի աշխատավարձների աճի վրա բացասական ճնշում-

<sup>21</sup> Արտահանման և ներմուծման իրական աճի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:


<sup>22</sup> Աշխատանքի շուկայի՝ 2014 թվականի չորրորդ եռամյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված 2014 թվականի երրորդ եռամյակի և 2014 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի փաստացի ցուցանիշների վրա: Ենթարածմում ներկայացված աճի գնահատումները նախորդ տարվա մույն ժամանակահատվածի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

ներ է գործադրել, ինչի արդյունքում այն կազմել է 6.5%: Այսպիսով, 2014 թվականին նաև ավելացրել է միջին աշխատավարձը բարձրացել է 7.6%-ով:


2014 թվականին արձանագրված թույլ տնտեսական ակտիվության հետևանքով տնտեսությունում աշխատութի նկատմամբ պահանջարկն ավելի քիչ է աճել, քան առաջարկը՝ արտահայտելով 2014 թվականին զբաղվածության փոքր՝ 0.6% աճը տնտեսապես ակտիվ բնակչության 2.4% աճի համեմատությամբ: Այս միտունը նկատվել է սկսած առաջին եռամյակից և խորացել է առավելապես տարվա երկրորդ կիսամյակում: Արդյունքում՝ չորրորդ եռամյակում **գործադրկության մակարդակը**, նախորդ տարվա միկնույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 1.2 տոկոսային կետով և կազմել 17.4%: Նախորդ կանխատեսումների համեմատ՝ երկրորդ կիսամյակում գործադրկությունն ավելի արագ է աճել և տարվա համար կազմել 17.5%, ինչը բարձր է 2013 թվականի ցուցանիշից 1.3 տոկոսային կետով:

Աշխատութի շուկայում հաշվետու ժամանակահատվածում նկատվել է նաև արտադրողականության թույլ աճ, իսկ աշխատավարձերի աճը փոքր-ինչ գերազանցել է արտադրողականության աճը և ավելացրել ձեռնարկություններում միավոր աշխատութի ծախսերը: Ավելացված միավոր աշխատութի ծախսերի հետևանքով երկրորդ կիսամյակում տնտեսությունում ստեղծվել են թույլ գնաճային ճնշումներ 0.15-0.25 տոկոսային կետի չափով:

### 3.2.4. Հարկաբյուջետային քաղաքականություն<sup>23</sup>



**Համախմբված բյուջեի հիմնական ցուցանիշների շարժը**




■ Համախմբված բյուջեի նկամուտմեր և դրամաշնորհներ  
■ Համախմբված բյուջեի ծախսեր  
■ Բյուջեի պակասուրդ («-» նշանը՝ պակասուրդ, «+» նշանը՝ հավելուրդ)

**2014 թվականի չորրորդ եռամյակում ՀՀ պետական բյուջեի կատարումն ընթացել է հարկային եկամուտների թերիավաքագրմամբ (տնտեսական ակտիվության անկմամբ պայմանավորված) և նախորդ եռամյակների համեմատ ավելի մեծ ծախսերի կատարմամբ: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա կանխատեսված զսպողի փոխարեն ունեցել է չեզոք ազդեցություն: հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը կազմել է զրոյական՝ կանխատեսված 1.2 զսպողի փոխարեն՝ հիմնականում պայմանավորված եկամուտների ազդակի շեղմամբ: Ընդ որում, չեզոք ազդեցությունը դրսնորվել է ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի մասով:**


Նախորդ տարվա չորրորդ եռամյակի համեմատ՝ համախմբված բյուջեի եկամուտները 2014 թ. չորրորդ եռամյակում ավելացել են 10.0%-ով: ընդ որում՝ հարկային եկամուտների տ/տ աճը կազմել է 10.3%: Հարկային եկամուտներում, նախորդ տարվա չորրորդ եռամյակի համեմատությամբ, 0.2 տոկոսային կետով ավելացել է անուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով հարկային եկամուտների 50.2%-ը, և 4.8 տոկոսային կետով նվազել է ուղղակի հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով 36.6%-ը: Հատկանշական է, որ անուղղակի հարկերում ավելացված արժեքի հարկի աճը կազմել է 14%, իսկ ուղղակի հարկերում շահութահարկի նվազումը՝ 44.7%: Անուղղակի հարկերի տ/տ աճը կազմել է 10.8%, իսկ ուղղակի հարկերի տ/տ նվազումը՝ 2.5%: Այլ հարկերի կշիռը հարկային եկամուտներում ավելացել է տ/տ 4.6 տոկոսային կետով և կազմել հարկերի 13.2% -ը: Եկամուտների ազդակը եղել է չեզոք՝ կանխատեսված

<sup>23</sup> Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է չորրորդ եռամյակի նախնական փաստացի ցուցանիշների հիմնա վրա (ներառյալ՝ Ծիգ-երի միջոցները) կազմված համախմբված բյուջեի նախնական փաստացի ցուցանիշներով: Ընդ որում, եկամուտների ազդեցությունը հաշվարկվել է կանխատեսված ՀՆԱ անվանական ցուցանիշի, իսկ ծախսերի ազդեցությունը՝ գնահատված պոտենցիալ ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ:

ՀՀ բյուջեի ծախսերի մեջ 2014 թ. չորրորդ եռամսյակում նվազում է արձանագրվել պետական սպառման և տոկոսավճարների գծով



2014 թ. չորրորդ եռամսյակում, ի տարերություն նախորդ եռամսյակների, ծևավորվել է բյուջեի ամենամեծ պակասուրդը (մլրդ ՀՀ դրամ)



Դամախառն պահանջարկի վրա հարկարյութեասային քաղաքականությունը 2014 թ. ունեցել է 0.65 ընդայնող ազդեցություն:

զապողի փոխարեն, ինչը բացատրվում է կանխատեսվածի համեմատ հարկային եկամուտների ավելի մեծ թերհավաքագրնամբ՝ պայմանավորված տնտեսական ակտիվության անկնամբ:

Չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր ծախսերն ավելացել են 0.8%-ով: Ընթացիկ ծախսերը նվազել են տ/տ 3.7%-ով, որտեղ պետական սպառումը նվազել է տ/տ 16.4%-ով: «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածի ցուցանիշի կամ կապիտալ ծախսերի գծով աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 30.0%: Չորրորդ եռամսյակում ծախսերի մակարդակը կազմել է տարեկան ծախսերի շուրջ 33%-ը, որը գերազանցել է եռամսյակային համանասնություններով նախատեսված ցուցանիշը (նախորդ եռամսյակներում տնտեսված ծախսերի որոշ մասն իրականացվել է հաշվետու եռամսյակում): «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածում հատկանշական է արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող կապիտալ ծախսերի տ/տ 43.4% աճը: Չորրորդ եռամսյակում պետական ծախսերը (ներառյալ զուտ վարկավորումը) համախառն պահանջարկի վրա ունեցել են չեզոք ազդեցություն, որը կանխատեսվածին համահունչ է:

Եկամուտների և ծախսերի վերը նշված ցուցանիշները չորրորդ եռամսյակում ծևավորել են բյուջեի 87.5 մլրդ դրամ պակասուրդ:

Ընդ որում, պակասուրդը մոտ 40.0%-ով ֆինանսավորվել է ներքին աղբյուրների և 60.0%-ով արտաքին աղբյուրների հաշվին:

Ընդհանուր առանձին, տարվա արդյունքում<sup>24</sup> պետական բյուջեի եկամուտները կազմել են 1103.4 մլրդ դրամ, ինչը 4.2 տոկոսով պակաս է ճշգրտված ծրագրի<sup>25</sup> ցուցանիշից: Ընդ որում, հարկային եկամուտները կազմել են 1062.8 մլրդ դրամ՝ ապահովելով 2014 թ. համար նախատեսված **հարկեր/ԳՆԱ 23.4% ցուցանիշը**: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտների աճը կազմել է 6.3% կամ 63.4 մլրդ դրամ՝ պայմանավորված հիմնականում ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի աճով: Պետական ծախսերի (ԾԻԳ-երի միջոցները ներառյալ) աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 7.9%: Տարվա արդյունքում պետական բյուջեի պակասուրդը կազմել է 93.2 մլրդ ՀՀ դրամ:

Դամախառն պահանջարկի վրա **հարկարյութեատային քաղաքականությունը տարվա արդյունքում ունեցել է 0.65 ընդայնող ազդեցություն՝ պայմանավորված եկամուտների չեզոք և ծախսերի ընդլայնությունով:**

**Ամփոփենք. 2014 թվականին ՈԴ-ից փոխանցվող դրամակամ միջոցների կրծատումը, շինարարության ոլորտում թողարկման ծավալների նվազումը և թույլ ներդրումային ակտիվությունը բացասական ծնշումներ են գործադրել մասնավոր հատվածում իրականացվող ծախսումների վրա, որոնք էականորեն մնում են տարվա ընթացքում իրականացված ընդայնողական դրամավարկային և հարկարյութեատային քաղաքականությունների արդյունքում՝ մեղմելով նաև ՀՀ տնտեսությունում տնտեսական աճի դանդաղումը և գնանկումային միջավայրը:**

2014 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումների ծեղվաճքը գնահատվում է բացասական: Դաշվի առնելով նաև աշխատութիւն շուկայի և պետական ծախսումների վարժագիծը՝ գնահատվում է, որ վերը նշված գործուները չորրորդ եռամսյակում սպառողական շուկայում ստեղծել են 0.7-0.8 տոկոսային կետ գնանկումային ծնշումներ:

<sup>24</sup> Առանց արտաքրյութեատային միջոցների հաշվառման:

<sup>25</sup> ՀՀ կառավարության եռամսյակային համանասնությունների ճշգրտված ծրագրի մկանումը:

### 3.3. Փող և ֆինանսական շուկայի զարգացումներ

### **3.3.1. Ֆինանսական շուկա, փող և վարկ**

**2014 թ. չորրորդ եռամսյակի բնաթագում  
Կենտրոնական բանկը նշանուել է դրամավարկային  
քաղաքականության ուղղություններու գնածի  
նապատակի հագործության, ինչպես նաև  
համաշխարհային տնտեսության և տարածաշրջային  
զարգացումների ազդեցությանը փինանսավայրը և  
արժուաբային շրկանակներում ձևավորված  
լայպատճեամ շնորհանդես նաև պարզաբնակ է:  
**Քաղաքականության նշանակության ուղղություններու վեհական է**  
դրամավարկային գործիքականության ակտիվի  
կիրառանամքը և քաջանարդի հայուարդություններով:**

**Նոյեմբերի վերջից ԿԲ-ն երկու ամքամ վերանայել է  
լոմբարդային ռեպ գործիքի սուլուսարդությունը՝  
բազուաննելով մինչև 21.0%:**

**ԿՐ-Ը Վերջին տարիներին առաջին անգամ պարտադիր պահուստավոր պահուստավորման մեջամտած կերպությունը դրանք դրանք դրամավարկային քաղաքավամության գործիք արտադրությունը ներդրության միջոցների համար պահուստավորության դրույթը 12%-ից քաղաքավագան 24%-ից**

2014 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Կենտրոնական բանկը ճշգրտել է դրամավարկային քաղաքականության ուղղությունները գնածի նպատակի հրագործման, ինչպես նաև համաշխարհային տնտեսության և տարածաշրջանի զարգացումների ազդեցությամբ ֆինանսական և արժութային շուկաներում ձևավորված լարվածության մեղմնան նպատակով։ Քաղաքականության ճշգրտումն ուղեկցվել է դրամավարկային գործիքակազմի ակտիվ կիրաօնմանը և բազմաթիվ հայտարարություններով։

Նոյեմբերի վերջին տեղի է ունեցել ՀՀ տնտեսության հիմնարարներից բխող դրամի փոխարժեքի ճշգրտում՝ դրամի արժեզրկմանը: ՀՀ կենտրոնական բանկի և ֆինանսական շուկայի նաևնակիցների կողմից գնահատվել և ԿԲ կողմից հայտարարվել է, որ դրամի փոխարժեքի ճշգրտումն արդեն իսկ իրականացվել է և այն գտնվում է կայունացման տիրույթում: Սակայն դեկտեմբերի սկզբին Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական իրավիճակի վատթարացումը արժեզրկման նոր ճնշումներ և փոխարժեքի տատանողականություն ձևավորեց: Այս իրավիճակում Կենտրոնական բանկը կրկին հանդես եկավ հայտարարությամբ, որ այդ երկույթները կրում են կարծաժամկետ բնույթ, և ԿԲ պահուատները լիովին բավարար են կամնելու փոխարժեքի բոլոր տեսակի արիեստական տատանումները և ապահովելու ֆինանսական կայունությունը: **Այդ նպատակով ԿԲ-ը կարգավորել է դրամային իրացվելիությունը՝ նշված ժամանակահատվածում 2 անգամ վերաբարելով լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույթը և բարձրացնելով մինչև 21.0%:**

ՈԴ ֆինանսական շուկայից եկող ճնշումների ուժգնացման պայմաններում շարունակվեցին դրամի արժեգրկման սպասումները: Ստեղծված իրավիճակը կարգավորելու, փոխարժեքի տատանումները հարթելու և արտարժութային շուկայում հավասարակշռությունը վերականգնելու համար ՀՀ ԿԲ-ն մինչև տարեվերջ կիրառեց նոր մոտեցում՝ ամենօրյա սակարկությունների միջոցով իրականացնելով արտարժույթի վաճառք՝ նախապես հայտարարված առավելագույն սահմանաբանակով: ՀՀ ֆինանսական շուկայում թափանցիկության ապահովման նպատակով ՀՀ կենտրոնական բանկն օրական կտրվածքով իրապարակում էր իրականացվող սակարկությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն: Նպատակ հետապնդելով նվազեցնելու ՀՀ կենտրոնական բանկի ազդեցությունը ՀՀ դրամի փոխարժեքի ձևավորման վրա, նախատեսվող օրական միջամտության ծավալները փուլ առ փուլ նվազեցվեցին մինչև ՀՀ դրամի հավասարակշիռ նակարդակի ձևավորումը: Միաժամանակ, իրացվելի հության կարգավորման նպատակով ԿԲ-ն վերջին տարիներին առաջին անգամ պարտադիր պահուստավորման մեխանիզմը կիրառեց որպես դրամավարկային քաղաքականության գործիք: արտարժույթով ներգրավված միջոցների համար պահուստավորման դրույքը 12%-ից բարձրացվեց 24%-ի: Այս դրույթի նկատմամբ պահանջարկը կարգավորելու համար ԿԲ-ն հայտարարեց և իրականացրեց արտարժույթի ներգրավման և տրամադրման սվոյ գործառնություններ:


Նշված քայլերից հետո արժութային շուկայում որոշակի կայունացում արձանագրվեց, ինչով պայմանավորված՝ դեկտեմբերի վերջին ԿԲ խորհրդի կողմից նշագեցվեցին արտաքինային ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորման սահմանաշափը (24.0%-ից 20.0%) և լումբարդային ռեզո գործիքի տոկոսադրույթը (21.0%-ից 20.0%); Միաժմանակ, որամի առժեզրկմանը պայմանա-

Վորված, գնաճային սպասումները նպատակային ցուցանիշի շուրջ խարսխելու համար, ԿԲ-ն 1.75 տոկոսային կետով բարձրացրել է Վերաֆինանսավորման տոկոսադրույթը՝ սահմանելով 8.5%:


2015 թվականի սկզբին ԿԲ խորհուրդը շարունակել է նվազեցնել լոնբարդային ռեպո տոկոսադրույթը՝ սահմանելով 14.5%: Երկու փուլով նվազեցումը, որը ընդհանուր առմամբ կազմել է 5.5 տոկոսային կետ, ֆինանսական շուկայի դրամային միջոցների կարճաժամկետ տոկոսադրույթները ուղղորդել է նվազման ուղղությամբ: Միաժամանակ, իմանվելով գնաճային միջավայրի կանխատեսումների վրա, ԿԲ-ն շարունակել է բարձրացնել Վերաֆինանսավորման տոկոսադրույթը (ընդհանուր առմամբ 2 տոկոսային կետով՝ սահմանելով 10.5%):

2014 թ. 4-րդ եռամյակի ընթացքում ԿԲ հիմնական գործիքի՝ 7-օրյա ռեպո համաձայնագրերի տոկոսադրույթը նոյեմբերի վերջից բանկային համակարգում առկա դրամային իրացվելիության կրճատման պայմաններում բարձրացել է համախմբվելով ԿԲ կողմից տրամադրվող լոնբարդային ռեպո գործիքի տոկոսադրույթի շրջակայքում: Արդյունքում՝ դեկտեմբերին միջին տոկոսադրույթը, սեպտեմբերի համեմատ, աճել է 13.6 տոկոսային կետով և կազմել 20.61%, իսկ եռամյակի միջին ցուցանիշի աճը կազմել է 3.44 տոկոսային կետ:

Եռամյակի ընթացքում կարճաժամկետ տոկոսադրույթները աճել են




ՀՅ ԿԲ կողմից իրականացված գործառնությունների ծավալները (միջին ամսական պաշար)




ՀՅ ԿԲ կողմից իրականացված գործառնությունները (գործարքի միջին ծավալ)

Ժամանակահատված	Ուղարկում (մինչև 7 օր)	Ներգրավված միջոցներ		Լոնբարդային ռեպո	
		Ծավալ (մլն դրամ)	Միջին կրպած %	Ծավալ (մլն դրամ)	Միջին կրպած %
I եռ. 2013 թ.	63652.16	8.09	2518.46	6.50	14.53
II եռ.	71467.51	8.19	2712.31	6.50	45.74
III եռ.	86238.94	8.42	2712.31	6.75	20.30
IV եռ.	76070.53	8.31	6035.38	6.71	7.69
I եռ. 2014 թ.	58769.52	7.80	8230.77	6.17	297.76
II եռ.	41619.24	7.79	9908.46	5.88	41.38
III եռ.	37331.05	7.16	3270.00	5.47	16.08
IV եռ.	34048.94	10.60	1765.67	5.25	41550.14
					19.69

2014 թ. չորրորդ եռամյակում ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակը՝ ՀՅ դրամի փոխարժեքի արժեզրկումը, ԿԲ կողմից կիրառվող գործիքների տոկոսադրույթների բարձրացումը, պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխության արդյունքում բանկային համակարգում առկա իրացվելիության կրճատումը անխուսափելիորեն պետք է հանգեցնեին դրամային շուկայում կարճաժամկետ տոկոսադրույթների կտրուկ աճի: Բորսայական միջբանկային մեկորյա վարկերի (overnight) տոկոսադրույթների միջին եռամյակային ցուցանիշը նախորդ եռամյակի միջինի համեմատ աճել է 1.88 տոկոսային կետով և կազմել 8.54%, իսկ դեկտեմբերի միջին տոկոսադրույթը կազմել է 20.07%: Միջբանկային ռեպո միջին եռամյակային տոկոսադրույթը նախորդ եռամյակի համեմատ աճել է 1.46 տոկոսային կետով, իսկ դեկտեմբերի միջին տոկոսադրույթը սեպտեմբերի միջինի համեմատ աճել է 12.94 տոկոսային կետով և կազմել 19.89%:



2014 թ. չորրորդ եռամսյակում պետական պարտատոմսերի շուկայում տոկոսադրույթները բարձրացել են



### Պետական պարտատոմսերի շուկա

2014 թ. նոյեմբերի վերջից կարճաժամկետ տոկոսադրույթների կտրուկ աճին չէին կարող չափազանքել նաև պետական պարտատոմսերի եկամտաբերությունները: Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը նպատակահարումար գուազ դեկտեմբերին ծերնապահ մնալ կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումից: Արդյունքում՝ եռամսյակի միջին եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 0.36 տոկոսային կետով և կազմել 7.09%: Ինչ վերաբերում է միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերին, ապա այդ արժեթղթերի եկամտաբերությունները դեկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, աճել են ավելի քան 2 տոկոսային կետով:

Ըստ մինչև մարտում եկամտաբերության կորի՝ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում տոկոսադրույթներմ աճել են կորի ողջ երկայնքով: Երկարաժամկետ տոկոսադրույթը դեկտեմբերի վերջին, սեպտեմբերի համեմատ, աճել է մոտ 3.0 տոկոսային կետով և կազմել 14.42%: Կորի երկարաժամկետ և կարճաժամկետ տոկոսադրույթների (ժայռակետերի) տարրերությունը դեկտեմբերին աճել է 0.88-ով և կազմել 5.64 տոկոսային կետ:


2014 թ. դեկտեմբերին արտարժույթի նկատմամբ պահանջարկի կտրուկ ավելացման պայմաններում ավանդների կառուցվածքում տեղի են ունեցել փոփոխություններ, նաև ավանդների և արտարժութային ժամկետային ավանդների մի որոշ մաս փոխարկվել է ցավահանջ արտարժութային ավանդների:

Միևնույն ժամանակ, ֆինանսական շուկայում իրացվելիության կտրուկ անկումը ենթադրում էր և դրամային, և արտարժութային ավանդների տոկոսադրույթների աճ: Առևտրային բանկերի կողմից հայտարարվել է դրամային ավանդների տոկոսադրույթների գգալի աճ, ինչը, սպասվում է, ավանդների ծավալի վրա իր ազդեցությունը կունենա 2015 թ. առաջին եռամսյակում:


Դեկտեմբերին դրամային ավանդների տոկոսադրույթների միջին ամսական մակարդակը կազմել է 11.9%՝ սեպտեմբերի համեմատ աճելով 0.2 տոկոսային կետով: Արտարժութային ավանդների միջին ամսական տոկոսադրույթը դեկտեմբերին կազմել է 8.2%՝ սեպտեմբերի համեմատ աճելով 1.3 տոկոսային կետով, իսկ միջին եռամսյակային ցուցանիշը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 7.2%: Դրամային ավանդների ծավալները եռամսյակի ընթացքում նվազել են 7.4%-ով. Նվազման գերակշիռ մասը բաժին է ընկել դրամով ցավահանջ ավանդներին, որոնք նվազել են 11.3%-ով, ժամկետային ավանդների նվազումը կազմել է 4.8%: Ավանդների տոկոսադրույթների աճի պարագայում 2015 թվականին կվերականգնվեն դրամով ավանդների ծավալները:

Արտարժութային ավանդները եռամսյակի ընթացքում աճել են 17.2%-ով՝ պայմանավորված հիմնականում ցավահանջ ավանդների աճով: Եթե բացառենք չորրորդ եռամսյակում փոխարժեքի արժեգումը, ապա ավանդների ծավալները մնացել են գրեթե անփոփոխ՝ ցավահանջ ավանդների աճը զուգակցվել է ժամկետային ավանդների նվազմամբ:


### ՀՅ դրամով և արտարժույթով միջոցների տոկոսադրույթները




2014 թ. չորրորդ եռամյակում արտարժույթով ավանդների աճը գերազանցել է դրամով ավանդների աճը



2014 թ. չորրորդ եռամյակում վարկավորման ընդհանուր ծավառում շարունակել են գերազանց արտարժութային վարկերը



2014 չորրորդ եռամյակում արտարժութային վարկերի և ավանձների տոկոսադրույթների տարրերությունը նվազել է



Եռամյակի ընթացքում դրամով վարկավորման տոկոսադրույթների նվազման միտում է արձանագրվել թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց 1 տարուց ավելի ժամկետով տրամադրված վարկերում: Արդյունքում ՀՅ դրամով վարկավորման տոկոսադրույթների միջին եռամյակային մակարդակը նախորդ եռամյակի համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 18.0%:

2014 թ. չորրորդ եռամյակում 0.2 տոկոսային կետով նվազել է նաև արտարժույթով տրամադրված վարկերի միջին եռամյակային տոկոսադրույթը և կազմել 10.9%:

Վարկավորման արժութային կառուցվածքում արտարժույթով և դրամով տրամադրված վարկերի ծավալների աճը համապատասխանաբար կազմել է 17.8% և 2.7%: Վարկավորման ընդհանուր կառուցվածքում շարունակել են գերակշռել արտարժույթով տրամադրված վարկերը (մոտ 60%): Ընդհանուր վարկավորման ծավալների աճը եռամյակի ընթացքում կազմել է 11.7% (տ/տ 21.0%), իսկ բացարձակ արտահայտությամբ՝ 241.7 մլրդ դրամ: Երրորդ եռամյակի նկատմամբ փոխարժեքի անփոփխության պարագայում արտարժույթով վարկերն աճել են 1.0%-ով, իսկ ընդհանուր վարկավորման ծավալները՝ 1.8%-ով: Դրամով վարկերի եռամյակային աճը կազմել է 2.73%:

### Ներգիր 3

Ըստ ՀՅ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ 2014 թ. չորրորդ եռամյակում անցկացված հարցման արդյունքների՝ եռամյակում խստացվել են վարկավորման ընթացակարգերը: Ընթացակարգերի խստացման հիմնական գործոններ են եղել իրացվելիության մակարդակի, հաճախորդների վարկարժանության, փողի շուկաների հասանելիության սահմանափակումները, ինչպես նաև տնտեսական ակտիվության դանդաղումը:

Պահանջարկի աճ արձանագրվել է սպառողական վարկերի նկատմամբ, անփոփխ մակարդակ՝ հիփոթեքային վարկերի նկատմամբ և պահանջարկի աճկում՝ ծեռնարկություններին տրամադրվող վարկերի նկատմամբ: Անկման հիմնական գործոնը կապիտալ ներդրումների նախատեսվող ցածր մակարդակն է:

2015 թ. առաջին եռամյակում կշարունակվեն բոլոր վարկատեսակների ընթացման գործընթացները, և սպասվում է պահանջարկի փողոքինչ աճ ծեռնարկություններին տրամադրվող և սպառողական վարկերի նկատմամբ, իսկ հիփոթեքային վարկերի նկատմամբ պահանջարկը կմնա անփոփխ:

2014 թ. չորրորդ եռամյակում շարունակվել է արտարժութային վարկերի ու ավանձների տոկոսադրույթների միջև տարրերության նվազման միտումը. միջին եռամյակային ցուցանիշը նախորդ եռամյակի համեմատ նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 3.7 տոկոսային կետ: Դրամային վարկերի և ավանձների տոկոսադրույթների տարրերությունը եռամյակի համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 6.05 տոկոսային կետ, իսկ դեկտեմբերին, սեպտեմբերի համեմատ, այդ տարրերությունը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 5.9 տոկոսային կետ:

2014 թվականի չորրորդ եռամյակում ՀՅ դրամի արժեզրկումն իր արտացոլում է գտել նաև դոլարայնացման ցուցանիշում (արտարժութային ավանձներ/փողի զանգված հարաբերություն)՝ նախորդ եռամյակի նկատմամբ աճելով 5.42 տոկոսային կետով:

Դրամավարկային ցուցանիշներ	Մայտ 12-ամյա աճ	Հունիս 12-ամյա աճ	Մեամբեր 12-ամյա աճ	Ղեկումներ 12-ամյա աճ
Փողի զանգված (%)	12.84	14.78	9.64	8.34
Դրամային զանգված (%) )	10.92	14.26	14.15	-3.51
Փողի բազա (%)	20.84	8.21	-0.52	-0.15
Դրամային բազա (%)	1.67	4.49	0.63	15.65
Կանխիկ (%) )	-4.49	-1.19	1.44	-9.39
Դրամով ավանդներ (%) )	25.27	28.59	25.31	1.37
Արտարժույթով ավանդներ (%) )	14.95	15.36	4.71	22.74
Դոլարայնացում (տոկոսային կետ)	0.89	0.24	-2.15	6.0
Փողի բազմարկիչ (տոկոսային կետ)	-0.14	0.13	0.21	0.15
Դրամային բազմարկիչ (տոկոսային կետ)	0.12	0.12	0.17	-0.22


### 3.3.2. Փոխարժեք

ԱՄՆ դոլարի նկատմամբ առևտրային գործընկեր երկրների անվանական միջին կշռված փոխարժեքի արժեզրկումը 2014 թ. չորրորդ եռամյակում բավականաչափ արագացել է. արձանագրվել է եռ/եռ 9.9%-ով արժեզրկում, որից միայն 5.6 տոկոսային կետը պայմանավորվել է ոռուսական ռուբլու կտրուկ արժեզրկմամբ (չորրորդ եռամյակում ռուսական ռուբլու միջին անվանական փոխարժեքի արժեզրկումը երրորդ եռամյակի նկատմամբ կազմել է 31.5%): Գործընկեր երկրների արժույթների արժեզրկման ճնշումների ներքո արտաքին հավասարակշռության ապահովման արդյունքում ՀՀ դրամի անվանական փոխարժեքը նոյեմբերին կրել է վերոնշյալ զարգացումների ազդեցությունը և արժեզրկման բարձր տեմպեր գորանցել դեկտեմբերին՝ սեպտեմբերի նկատմամբ արժեզրկվելով 11.8%-ով: Նշված ժամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկը ընթացիկ հաշվի ֆինանսավորման պահանջը լրացնելու և արժեզրկման ու գնաճային սպասումների մեղմնան նպատակով արժութային շուկայում հանդես է եկել որպես արտարժույթի գուտ վաճառող՝ ընդհանուր առնամբ չորրորդ եռամյակում շուկա ներարկելով շուրջ 212.5 մլն ԱՄՆ դոլար:

Գործընկեր երկրներում հիմնականում ավելի խոր արժեզրկումներով պայմանավորված՝ 2014 թ. չորրորդ եռամյակում ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքն արժևորվել է եռ/եռ 4.2%-ով, իսկ իրական արդյունավետ փոխարժեքը<sup>26</sup> եռ/եռ 6.0%-ով: Իրական փոխարժեքի արժևորման տեմպերը արագացել են և կազմել տ/տ 9.3%, ինչը հիմնականում պայմանավորվել է գործընկեր երկրների անվանական միջին կշռված փոխարժեքի արժեզրկման բարձր տեմպերով (էական է ռուսական ռուբլու զգալի արժեզրկումը):

<sup>26</sup> Իրական փոխարժեքի 2014 թ. չորրորդ եռամյակի ցուցանիշը ՀՀ գմահատակամն է:


2014 թ. չորրորդ եռամսյակում հրական արդյունավետ փոխարժեքի տ/տ արժևորման տեմպերը բավականին արագացել են (%)



տ/տ աճ (%)	I եռ. 2013	II եռ.	III եռ.	IV եռ.	I եռ. 2014	II եռ.	III եռ.	IV եռ.
Հրական արդյունավետ փոխարժեք («+»՝ արժևորում)	-6.4	-1.6	7.9	6.8	8.5	7.9	3.1	9.3
ՀՀ միջին գնաճ	3.0	5.2	8.7	6.4	4.6	3.3	1.0	3.2
ՀՀ դրամ/ԱՄՆ դրամ անվանական փոխարժեք («+»՝ արժևորում)	-5.1	-3.3	0.5	0.2	-0.4	0.5	0.0	-6.0
Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված գնաճ	4.5	4.4	4.3	4.0	3.7	4.4	4.6	5.1
Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված անվանական փոխարժեք («+»՝ արժևորում ԱՄՆ դրամի նկատմամբ)	-0.4	-1.1	-3.2	-4.3	-8.0	-8.7	-7.0	-18.7

Հրական փոխարժեքի արժևորում = ՀՀ գնաճ + ՀՀ անվանական փոխարժեքի արժևորում - Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված գնաճ - Արևտրային գործընկեր երկրների միջին կշռված անվանական փոխարժեքի արժևորում:

ՀՀ դրամի փոխարժեքի շարժը ԱՄՆ դրամի, Եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ



#### Ներգիր 4

##### Արժութային շուկա

ԱՄՆ դրամի նկատմամբ ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը 2014 թ. չորրորդ եռամսյակի վերջին կազմել է 474.97 դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ արժեզրկվելով 14.18%-ով:

**2014 թ. չորրորդ եռամսյակում ՀՀ դրամի վարդագիծը ԱՄՆ դրամի, Եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ**

ՀՀ դրամի եռ/եռ փոխարժեքը			
Արժութային գույգ	Փոխարժեք 30.09.2014 թ. դրությամբ (ՀՀ դրամ)	Փոխարժեք 30.12.2014 թ. դրությամբ (ՀՀ դրամ)	% (արժևորում՝ «+», արժեզրկում՝ «-»)
USD/AMD	407.6	474.97	-14.18
EUR/AMD	513.49	577.47	-11.08
RUB/AMD	10.32	8.15	26.63
ՀՀ դրամի տ/տ միջին փոխարժեքը			
Արժութային գույգ	2013 թ. չորրորդ եռամսյակի միջին փոխարժեք	2014 թ. չորրորդ եռամսյակի միջին փոխարժեք	% (արժևորում՝ «+», արժեզրկում՝ «-»)
USD/AMD	405.48	431.32	-5.99
EUR/AMD	552.11	538.14	2.60
RUB/AMD	12.46	9.11	36.72

Եռամսյակի ընթացքում արժութային շուկայում ԱՄՆ դրամ - ՀՀ դրամ գործառնությունների համախառն ծավալը կազմել է 3.43 մլրդ ԱՄՆ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ (2.95 մլրդ ԱՄՆ դրամ) աճելով 16.3%-ով:

Եվրո - ՀՀ դրամ գործառնությունների շուկայում իրականացված գործառնների համախառն ծավալը կազմել է 304.98 մլն Եվրո (նախորդ եռամսյակում 276.28 մլն Եվրո):


**2014 թ. չորրորդ եռամսյակում արժութային շուկայում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվել է 212.54 մլն ԱՄՆ դրամի վաճառք:**

### 3.4. Վճարային հաշվեկշիռ<sup>27</sup>


2014 թ. չորրորդ եռամյակում նշանակալիորեն նվազել էր ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների դոլարային արժեքը, ինչը պայմանավորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու կտրուկ արժեգործմամբ: Արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է՝ չնայած ապրանքային հաշվեկշիռի պակասուրդի նվազմանը: Ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորմանը նպաստել են պետական հատվածի կողմից վարկերի զուտ ներգրավումը, օտարերկրյա զուտ ուղակի ներդրումները և բանկային համակարգի կողմից տրամադրված զուտ միջոցները: Ոչ ֆինանսական մասնավոր հատվածի մոտ արտարժութային միջոցների զուտ կուտակման<sup>28</sup> պայմաններում ընթացիկ հաշվի ֆինանսավորումը հանգեցրել է չորրորդ եռամյակում 77 ԿԲ զուտ արտաքին ակտիվների նվազմանը:

#### 3.4.1. Ընթացիկ հաշիվ

Ապրանքների արտահանման դոլարային արժեքի տ/տ փոփոխությունը և հիմնական ապրանքախմբերի նպաստումը (%)<sup>29</sup>



Ապրանքների ներմուծման դոլարային արժեքի տ/տ փոփոխությունը և հիմնական ապրանքախմբերի նպաստումը (%)



2014 թ. գնահատումներով՝ ընթացիկ հաշվի պակասուրդի/ՇՆԱ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ավելացել է և կազմել շուրջ 10.7%: 2014 թ. չորրորդ եռամյակում, ըստ գնահատումների, ընթացիկ հաշվի պակասուրդի/ՇՆԱ ցուցանիշը նախորդ տարվա նույն եռամյակի համեմատ ավելացել է շուրջ 4.0 տոկոսային կետով: Ընթացիկ հաշվի պակասուրդը 2014 թ. չորրորդ եռամյակում, նախորդ տարվա նույն եռամյակի համեմատ, ավելացել է 138.6 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 358.2 մլն ԱՄՆ դոլար:

2014 թ. չորրորդ եռամյակում արծանագրվել է ապրանքների արտահանման դոլարային արժեքի տ/տ 5.7% աճ:

Այդ աճին դրական նպաստում են ունեցել հումքային ապրանքները և բանկարժեք քարեր, մետաղներ ապրանքատեսակները, որոնք առավելացես կախված են միջազգային ապրանքային շուկաներում գնային օգրգացումներից: Ի տարբերություն վերջիններին՝ սպառողական և ներդրումային ապրանքները բացասական նպաստումներ են ունեցել ընդհանուր արտահանման՝ պայմանավորված հիմնական գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության դանդաղմամբ:

2014 թ. չորրորդ եռամյակում արծանագրվել է ապրանքների ներմուծման դոլարային արժեքի տ/տ 9.0% նվազում:

2014 թ. չորրորդ եռամյակում ներմուծման դոլարային արժեքի նվազումը պայմանավորվել է գրեթե բոլոր խումբ ապրանքների ծավալների նվազմամբ (դրական նպաստում են ունեցել փոքր կշիռ ունեցող մի քանի ապրանքախմբեր):

2014 թ. չորրորդ եռամյակում ապրանքային հաշվեկշիռի պակասուրդը, առևտորի պայմանների լավացման<sup>30</sup> և ներմուծման իրական աճի նկատմամբ արտահանման իրական ծավալների առաջանցիկ


<sup>27</sup> 2014 թ. չորրորդ եռամյակի ցուցանիշները 77 ԿԲ կամխատեսումներն ու գնահատականներն են:

<sup>28</sup> 2014 թ. չորրորդ եռամյակում 77 դրամի փոխարժեքի արժեգործման սպասումների մերրոր առնանագրվել են մասնավոր հատվածի կողմից արտարժույթի մեծածավալ գնումներ, ինչպես նաև թերթածառք, ինչի առյունքում այդ հատվածում դրամական արտարժութային միջոցների զուտ կուտակում:


<sup>29</sup> Արտահանման և ներմուծման ըստ ապրանքախմբերի և ըստ երկրների ցուցանիշները ներկայացված են համապատասխանաբար ՖՕԲ և Միֆ գմբերով, իսկ ընթացիկ հաշվի արտահանման և ներմուծման ցուցանիշները՝ ըստ վճարային հաշվեկշիռի հիմքի, համապատասխանաբար՝ կրեդիտով և դեբետով:

<sup>30</sup> Ներմուծման դոլարային գների տ/տ նվազումը գերազանցել է արտահանման դոլարային գների տ/տ նվազմամբ:

2014 թ. չորրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդը տ/տ ավելացել է



2014 թ. չորրորդ եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների գուտ ներփակում նվազել է նախորդ տարվա նույն եռամսյակի գուտ ներփակի համեմատ («+» գուտ վարկավորում, «-» գուտ փոխառություն)



աճի արդյունքում, նվազել է 127.3 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 573.3 մլն ԱՄՆ դոլար:

2014 թ. չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ, ծառայությունների բացասական հաշվեկշիռն ավելացել է և կազմել 81.0 մլն ԱՄՆ դոլար: Դա հիմնականում պայմանավորվել է ճանապարհորդության բացասական հաշվեկշիռի ավելացմանը և շինարարական ծառայությունների<sup>31</sup> դրական հաշվեկշիռի նվազմանը: Վերջինս արտացոլում է Ռուսաստանի տնտեսական դժվարությունների ազդեցությունը: Արդյունքում չորրորդ եռամսյակի համար գնահատվում է ծառայությունների արտահանման տ/տ 2.5% նվազում և ծառայությունների ներնուժման տ/տ 2.2% աճ:

Ֆիզիկական աճաման դրամական փոխանցումները<sup>32</sup> 2014 թ. չորրորդ եռամսյակում բավականաչափ նվազել են, ինչը պայմանավորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու կտրուկ արժեգույնամբ: «Աշխատողների վարձատրություն» հոդվածով գուտ ներփակը նվազել է տ/տ 29.1%-ով և կազմել 276.3 մլն ԱՄՆ դոլար, ինչը, այնուամենայնիվ, գերազանցել է «Ներդրումային եկամուտներ» հոդվածով գուտ արտահոսքի մակարդակը: Արդյունքում՝ «Սկզբնական եկամուտներ» հոդվածով արձանագրվել է 117.6 մլն ԱՄՆ դոլարի գուտ ներփակը: Մասնավոր տրանսֆերտների գուտ ներփակը նվազել է տ/տ 34.6%-ով և կազմել 150.9 մլն ԱՄՆ դոլար:

### 3.4.2. Կապիտալի և ֆինանսական հաշիվ<sup>33</sup>

2014 թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել է կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների 208.6 մլն ԱՄՆ դոլարի գուտ ներփակը՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 371.3 մլն ԱՄՆ դոլար գուտ ներփակի փոխարեն: Ընթացիկ հաշվի ֆինանսավորումն իրականացվել է պետական հատվածի վարկերով, օտարերկյա ուղղակի ներդրումներով և բանկային համակարգի կողմից տրամադրված միջոցներով: Ոչ ֆինանսական մասնավոր հատվածում արտաքութային միջոցների գուտ կուտակման պայմաններում ընթացիկ հաշվի ֆինանսավորումը հանգեցրել է ՀՀ ԿԲ գուտ արտաքին ակտիվների 149.6 մլն ԱՄՆ դոլարով նվազմանը:

Կապիտալ տրանսֆերտները 2014 թ. չորրորդ եռամսյակում նվազել են և կազմել 17.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 24.8 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն:

Օտարերկյա ուղղակի ներդրումների գուտ ներփակը ընթացիկ եռամսյակում կազմել է 116.4 մլն ԱՄՆ դոլար: Պետական վարկերի մասով արձանագրվել է 169.0 մլն ԱՄՆ դոլարի գուտ ներփակը՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի 392.0 մլն ԱՄՆ դոլար գուտ արտահոսքի փոխարեն (վերջինս պայմանավորվել է Ռուսաստանի արտաքին պարտքի մարմանը):

<sup>31</sup> Ներառում է սեղոնային աշխատողների կողմից մատուցված շինարարական ծառայությունների դրական արժեքը:

<sup>32</sup> 2014 թ. չորրորդ եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի միջոցով ֆիզիկական աճաման ոչ առևտորային բնույթի փոխանցումների գուտ ներփակի տ/տ 30.5% նվազում:


<sup>33</sup> 2014 թ. չորրորդ եռամսյակի կապիտալի և ֆինանսական հաշվի ցուցանիշը ներփակը կամ սատերումներն ու գնահատակամներն են:

Մասնավոր հատվածի կողմից արձանագրվել է 87.3 մլն ԱՄՆ դոլարի գուտ արտահոսք կամ, որ նույնն է՝ արտաքինային միջոցների կուտակում՝ նախորդ տարվա չորրորդ եռամյակի 660.0 մլն ԱՄՆ դոլար գուտ ներհոսքի փոխարեն: Այդ թվում՝ առևտրային բանկերի կողմից արձանագրվել է ֆինանսական միջոցների գուտ ներհոսք՝ 94.0 մլն ԱՄՆ դոլարի չափով, ի տարբերություն այլ մասնավոր հատվածի կողմից իրականացված 181.3 մլն ԱՄՆ դոլար գուտ արտահոսքի, ինչը արտահայտում է նաև չորրորդ եռամյակի վերջում արտաքին գործոններով պայմանավորված ՀՀ դրամի արժեգուման սպասումների ներքո մասնավոր հատվածի մոտ արտաքինային ակտիվների որոշակի կուտակման ազդեցությունը:


### 3.5. Արտաքին միջավայր

**2014 թ. չորրորդ եռամյակում ՀՀ հիմնական գործընկեր երկրներում արձանագրվել են տնտեսական ակտիվության դաշտային միություններ:**

2014 թ. չորրորդ եռամյակում ԱՄՆ-ում տնտեսական աճը որոշակիորեն դանդաղել է



2014 թ. չորրորդ եռամյակում Եվրոգոտում տնտեսական աճը շարունակել է ցածր մնալ



**2014 թ. չորրորդ եռամյակում ՀՀ հիմնական գործընկեր երկրներում արձանագրվել են տնտեսական ակտիվության դաշտային միություններ:**

Ըստ ԱՄՆ առևտրի դեպարտամենտի Տնտեսական վերլուծությունների բյուրոյի նախնական գնահատումների՝ **Ամերիկայի Միացյալ Նահանգներում 2014 թ. չորրորդ եռամյակում գրանցվել է եռ/եռ տարեկանացված 2.6% տնտեսական աճ (տ/տ աճը չորրորդ եռամյակում կազմել է 2.5%):** Ըստ որում, նախորդ եռամյակի (եռ/եռ տարեկանացված 5.0% աճ) համեմատ աճի դանդաղումը հիմնականում պայմանավորվել է ներնուծման աճով, պետական ծախսերի նվազմամբ և ներդրումների ու արտահանման դանդաղմամբ, ինչը միայն մասամբ չեղոքացվել է մասնավոր սպառնան ծախսերի և պաշարներում մասնավոր ներդրումների դրական զարգացումներով:

2014 թ. չորրորդ եռամյակում ԱՄՆ-ում արձանագրված միջին եռամյակային գնածը կազմել է տ/տ 1.3%՝ նախորդ եռամյակի 1.8%-ի փոխարեն: Տարեվերջին գնածը ԱՄՆ-ում կազմել է 0.8%: Ինչպես և սպասվում էր, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը 2014 թ. հոկտեմբերին ավարտեց քանակական ընդլայնման ծրագիրը, իսկ քաղաքականության տոկոսադրույթները պահպանվեցին 0 - 0.25% ցածր մակարդակում:

Համաձայն Եվրոստատի նախնական գնահատականների՝ **Եվրոգոտում 2014 թ. չորրորդ եռամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, արձանագրվել է 0.9% տնտեսական աճ: Միաժամանակ, սպառողական գնածը ինդեքսը 2014 թ. չորրորդ եռամյակում միջինում գրանցել է տ/տ 0.2% աճ՝ նախորդ եռամյակի 0.4%-ի փոխարեն:** Հատկանշական է, որ տարեվերջին Եվրոգոտում արձանագրվել է 0.2% գնանկում:

Եվրոպական կենտրոնական բանկը չորրորդ եռամյակում պահպանել է քաղաքականության տոկոսադրույթի 0.05% և դրամական միջինների ներգրավման համար՝ -0.2% մակարդակները: Միևնույն ժամանակ, չորրորդ եռամյակում ԵԿԲ կողմից տրվել է ակտիվներով ապահովված արժեթղթերի և ապահովված պարտատոմսերի գնման քանակական ընդլայնման ծրագրի մեկնարկը:

2014 թ. չորրորդ եռամյակում Եվրոն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեգումկել է 5.7%-ով (տ/տ արժեգործում՝ 8.23%), և ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 1.249՝ նեկ Եվրոյի դիմաց:

**Ոլոսաստամի պետական վիճակագրական ծառայության նախնական գնահատումների համաձայն՝ տնտեսական աճը 2014 թ. կազմել**

է տ/տ 0.6%<sup>34</sup>: Ընդ որում, տարեկան կտրվածքով դրական զարգացումներ են արձանագրվել վերամշակող արդյունաբերության (2.5% աճ) և գյուղատնտեսության ոլորտներում (1.4% աճ), մինչդեռ շինարարության ճյուղում արձանագրվել է 5.2% աճկում: Հատկանշական է, որ տնտեսական դանդաղման պայմաններում նվազել են նաև մասնավոր սպառնական աճի տենապերը՝ կազմելով 1.5% (նախորդ տարի՝ 3.5% աճ), իսկ համախառն ներդրումների աճկումը շարունակվել է և կազմել 5.7% (նախորդ տարի՝ 6.6% աճկում): Ուղարկանում սպառնական գների հնդեքսը, 2014 թ. չորրորդ եռամսյակում արձանագրված փոխարժեքի շուրջ 31.7% տ/տ արժեզրկման պայմաններում, միջինում գրանցել է տ/տ 9.6% աճ (նախորդ եռամսյակում՝ 7.7% աճ): Տարեվերջին գնաճը Ուղարկանում կազմել է 11.4%, որը հունվարին ևս արագացել է՝ հասնելով մինչև 15 տոկոսի:

2014 թ. չորրորդ եռամսյակում «Intercontinental Exchange» (ICE) բորսայում գնանշվող Brent տեսակի **հում նավթի գինը**, պայմանավորված ԱՄՆ արդյունահանման ծավալների ավելացմամբ և ֆինանսական շուկաներում համապատասխան սպասումների ձևավորմամբ, նախորդ եռամսյակի նկատմամբ նվազել է շուրջ 25.6%-ով՝ միջինում մեկ բարելի դիմաց կազմելով մոտ 76.0 ԱՄՆ դոլար (տ/տ նվազումը՝ 30.5%). հարկ է նշել, որ տարեվերջին նավթի միջազգային գինը կազմել է 55.3 ԱՄՆ դոլար՝ մեկ բարելի դիմաց: Լոնդոնի մետաղների բորսայում գնանշվող **պրմածի գինը** 2014 թ. չորրորդ եռամսյակում նվազել է 5.8%-ով (տ/տ 8.3%-ով՝ տոննայի դիմաց միջինում կազմելով մոտ 6572 ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված Չինաստանում պահանջարկի տեմապերի դանդաղմանբ, ինչպես նաև ԱՄՆ դոլարի արժևորման ազդեցություններով:

Կոչտ կարմրահատ **ցորենի** արտահանման՝ ԱՄՆ Գյուղդեպարտամենտի կողմից գնանշվող գինը չորրորդ եռամսյակում նվազել է եռ/եռ 1.8%-ով՝ մեկ բուշելի դիմաց միջինում կազմելով 7.0 ԱՄՆ դոլար (տ/տ նվազումը՝ 16.2%): Նշենք, որ առատ բերքի սպասումների պարագայում չորրորդ եռամսյակում ցորենի գնի չնչին նվազումը հիմնականում պայմանավորվել է տարեվերջին Ուղարկանում աշխարհաբաղաբական զարգացումների ներքո ցորենի արտահանման նկատմամբ հնարավոր սահմանափակումների կիրառման վերաբերյալ շուկայական սպասումներով:

«New York Board-Intercontinental Exchange» (NYB-ICE) բորսայում գնանշվող անմշակ շաքարավազի գների հնդեքսը 2014 թ. չորրորդ եռամսյակում նվազել է եռ/եռ 0.7%-ով (տ/տ նվազումը՝ 10.6%): Շաքարավազի շուկայի զարգացումները տվյալ եռամսյակում հիմնականում պայմանավորվել են Բրազիլիայում եղանակային պայմանների և արտադրության վերաբերյալ անորոշությունների ներքո շուկայական տարաբնույթ սպասումներով: «Chicago Board of Trade» (CBOT) ապրանքահումքային բորսայում գնանշվող **բրմածի գինը** չորրորդ եռամսյակում նվազել է 3.9%-ով և միջին գինը մեկ ամերիկյան ցենտների (45.4 կգ) համար կազմել է 12.4 ԱՄՆ դոլար (տ/տ 20.1% նվազում):

**Հումքային և պարենային ապրանքների շուկաներում չորրորդ եռամսյակում արձանագրվել են սպասվածից ավելի էական գնանշումային միտումներ, ինչը պայմանավորվել է հիմնականում առանձին ապրանքային շուկաներին ներհասունկ զարգացումներով և շուկայական սպասումների գերարձագամքով:**

**Հումքային և պարենային ապրանքների շուկաներում չորրորդ եռամսյակում արձանագրվել են սպասվածից ավելի էական գնանշումային միտումներ, ինչը պայմանավորվել է հիմնականում առանձին ապրանքային շուկաներին ներհասունկ զարգացումներով և շուկայական սպասումների գերարձագամքով:**

<sup>34</sup> 2014 թ. չորրորդ եռամսյակի տվյալները դեռևս հրապարակված չեն:

#### 4. ԱՍՓՈՓՈՒՄ

**Արտաքին հատվածում** 2014 թվականի չորրորդ եռամսյակում արտաքին պահանջարկը պահպանվել է ցածր մակարդակում, իսկ հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում դիտվել են սպասվածից ավելի գնամկումային զարգացումներ: **Կանխատեսվող հորիզոնում** արտաքին պահանջարկի կողմից և հիմնական հումքային ու պարենային ապրանքների միջազգային շուկաներից էական գնաճային ծննդումներ չեն սպասվում:

2014 թվականի չորրորդ եռամսյակում **տնտեսական ակտիվությունը** դանդաղել է ի հաշիվ առևտրի ծավալների կրճատման, որի պարագայում 2014 թվականին **տնտեսական աճը տ/տ 3.2-3.5% միջակայքում կլինի:**

**Կանխատեսվող հորիզոնում** տնտեսական աճը աստիճանաբար կմոտենա իր երկարաժամկետ հավասարակշիռ մակարդակին՝ պայմանավորվելով մասնավոր սպառման աճի տեմպերի արագացմամբ և մասնավոր ներդրումների դանդաղ տեմպերով վերականգնմամբ: Այսպիսով, **կանխատեսվող հորիզոնում**, մասնավոր պահանջարկի կայունացման և հարկարյուծենուային քաղաքականության ընդհանուր առմանք չեզոք ազդեցության արդյունքում, **համախառն պահանջարկի վրա ներքին տնտեսության ազդեցությունը կլինի ոչ գնաճային:**

Պայմանավորված տարեվերջին արտարժության հոսքերի կտրուկ նվազման և ռուսական ռուբլու արժեզրկման ազդեցությամբ դրամի արժեզրկման ու գնաճային միջազգային ընդլայնման դրսևորումներով, ինչպես նաև դրանց հետևանքով ձևավորված գնաճային սպասումներով, **12-ամյա գնաճը չորրորդ եռամսյակում գերազանցել է սպասելիքները՝ դեկտեմբերի վերջին կազմելով 4.6%** և **գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքում:**

**Կանխատեսվող հորիզոնում** գնաճը կկայունանա նպատակային 4% մակարդակի շուրջ: **ԿԲ կանխատեսումների համաճայն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցածր քազայով և 2015 թ. հունվարից Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցությամբ պայմանավորված, տարվա առաջին եռամսյակում 12-ամյա գնաճը փոքր-ինչ կավելանա, սակայն արտաքին և ներքին տնտեսություններում սպասվող թույլ պահանջարկի պայմաններում աստիճանաբար կնվազի՝ տարեվերջին մոտենալով նպատակային ցուցանիշին:**

Հաշվի առնելով նախորդ տարեվերջի զարգացումներով և տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված ՀՀ ֆինանսական և ապրանքային շուկաներում տեղի ունեցած դրսևորումների աստիճանաբար չեզոքացումը՝ **ԿԲ-ն 2015 թ. առաջին եռամսյակում կշարունակի նվազեցնել ԿԲ լոմբարդային ռեպո տոկոսադրույթը՝ ուղղորդելով շուկայական կարճաժամկետ դրամային տոկոսադրույթը:** Միևնույն ժամանակ, դրանավարկային քաղաքականության դիրքքը պահպանելու նկատառումով, ԿԲ-ն տարեսկզբին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույթը: Նշված գործողությունները կրճատեն ԿԲ քաղաքականության և շուկայական կարճաժամկետ տոկոսադրույթների միջև ձևավորված տարբերությունը՝ դրանով իսկ վերաֆինանսավորման տոկոսադրույթին վերադարձնելով շուկայում իր ուղղորդիչ դերը, ինչպես նաև նպաստելով ֆինանսական շուկայում իրավիճակի կայունացմանը և ապահովելով գնաճի նպատակի իրագործումը միջնաժամկետ հատվածում:

**Կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ միջնաժամկետ հատվածում գնահատվում են հավասարակշռված:** Ընդ որում, **արտաքին հատվածից բխող**

**ռիսկերը** մեծ մասամբ կապված են համաշխարհային տնտեսության աճի տեմպերի վերականգնման, և հատկապես՝ զարգացող երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի տնտեսական ու աշխարհաքաղաքական զարգացումների հեռանկարների և հումքային ու պարենային ապրանքների շուկաների վրա դրանց հնարավոր ազդեցության փոխանցման հետ: **Աերքին տնտեսությունից բխող ռիսկերը** հիմնականում պայմանավորված են ներքին պահանջարկի զարգացումներով, մասնավորապես՝ մասնավոր սպառման և կապիտալ ներդրումների վերականգնման ընթացքով, Կառավարության կողմից իրականացվող ծրագրերով, Եվրասիական տնտեսական միությանը ԴՅ անդամակցության տնտեսական ազդեցություններով, ինչպես նաև բնակլիմայական պայմաններից կախված՝ գյուղատնտեսության ճյուղի զարգացումներով: Վերոնշյալ ռիսկերի դրսևորման պարագայում Կենտրոնական բանկը կարձագանքի համապատասխան քաղաքականությամբ՝ ապահովելով գնաճի նպատակային մակարդակը միջնաժամկետ հատվածում: